Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա

Իրականացնող՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱ՝ Ի ԴԵՄՍ «ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ,

Օգոստոս 2016թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ..... 3

**Ընդհանուր նկարագիր** ..... 3

**Ազդարարների տեսակները** ..... 4

**Corruption Watch** ..... 5

**Կառավարության հաշվետվողականության ծրագիր** ..... 6

**«Qui tam» փոխհատուցման հայեցակարգ** ..... 7

**Անանունության ապահովման ինֆորմացիոն տեխնոլոգիաների լուծումներ** ..... 11

**DarkNet և Tor համակարգեր** ..... 11

II. ՀՀ ԻՐԱՎՐՈՒԹՅՈՒՆ ..... 13

III. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ՎՐԱ ..... 15

# I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## Ընդհանուր նկարագիր

Այսօր դեռ միջազգային մակարդակով չի ձևավորվել մեկ միասնական իրավական պատկերացում կապված «whistleblowing» տերմինի հետ, որն թարգմանաբար նշանակում է հակաօրինական գործողությունների վերաբերյալ հաղորդում: Ըստ Black's Law Dictionary-ի whistleblower է համարվում այն աշխատակիցը, ով հաղորդում է գործատուի սխալ արարքները իրավապահ մարմինների: Այսինքն վերոնշյալ տերմինը կիրառվում է և հանրային, և մասնավոր սեկտորի համար:

Անձինք, ովքեր հայտնում են տեղեկություններ կոռուպցիայի կամ այլ անօրինական գործողությունների վերաբերյալ, ունեն շատ մեծ դեր կոռուպցիոն գործողությունների և պաշտոնական լիազորությունների չարաշահման բացահայտման վերաբերյալ: Սակայն գործելով ի շահ հանրության՝ վերջիններս վտանգի տակ են դնում իրենց սեփական անվտանգությունը: Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի տեղեկատվություն հաղորդող անձանց պաշտպանության մեխանիզմների ներդրումը:

Նման պաշտպանության տրամադրում նախատեսված է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 33-րդ հոդվածով, ինչպես նաև Եվրոխորհրդի Կոռուպցիայի մասին քրեական և քաղաքացիական իրավունքների մասին կոնվենցիաներով, Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի ավարտի մասին կոնվենցիայով:

Ազդարարների պաշտպանության ինստիտուտի վերաբերյալ առկա են նաև ԵԽԽՎ 2 բանաձևեր՝ 2009թ. սեպտեմբերի 14-ին ընդունված բանաձևը, որը առհասարակ պաշտպանության մեխանիզմների ներդրման մասին է առհասարակ և հանրային, և մասնավոր ոլորտներում, և 2015թ. մայիսի 19-ին ընդունված բանաձևը, որը պետության պաշտպանության ներքո է դասում նաև ազգային անվտանգության և հետախուզական տեղեկատվության հավաքագրման գործակալության համար աշխատող անձանց, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում ապաստանի տրամադրվող այն դեպքում, երբ նրանք հետապնդվում են իրենց հայրենիքներում:

Ազդարարների պաշտպանության մասին գործում են նաև 2014թ. Նախարարների խորհրդի հանձնարարականը, ինչպես նաև ՄԻԵԴ-ը *Guja v Moldova, Vogt v Germany, Wille v Liechtenstein, Babar Ahmed and others v the United Kingdom, Fuentes Bobo v Spain գործերում:*

Այս հարցով առաջադեմ են համարվում այն երկրները, որտեղ առկա օրենքները ներառում են ահազանգողների պաշտպանության համապարփակ կամ գրեթե համապարփակ դրույթներ և ընթացակարգեր հանրային և/ կամ մասնավոր ոլորտներում:

## Ազդարարների տեսակները

**Ներքին ահազանգողներ,** ովքեր կազմում են ահազանգողների հիմնական մասը և ահազանգում են ծառայակից կամ վերադաս աշխատակցի կողմից հակաօրինական վարքագծի մասին ընկերության ներսում:

Անանուն ահազանգման մեխանիզմները, որոնք ապահովում են բացարձակ գաղտնիության տարբերակ, օգնում են զարգացնել այնպիսի մթնոլորտ, որով աշխատողները ավելի հավանական է, որ գործողություններ կձեռնարկեն կազմակերպության ներսում անընդունելի վարքագծի, հնարավոր կամ փաստացի խախտումների հետ կապված՝ առանց վախի վրեժի: Գալիք՝ 2016թ. սեպտեմբերին հրատարակվող ISO 37001 կաշառակերության դեմ ստանդարտը ևս ներառում է անանուն ահազանգումները:[1]

**Արտաքին ահազանգողները,** ահազանգում են հակաօրինական վարքագծի վերաբերյալ արտաքին անձանց կամ մարմինների: Այս դեպքերում, կախված տեղեկատվության կարևորությունից և բնույթից, ահազանգողները կարող զեկուցել հակաօրինական վարքագծի մասին իրավաբանների, լրատվամիջոցների, իրավապահ կամ իրավապաշտպան մարմինների կամ այլ տեղական, պետական կամ դաշնային գործակալությունների: Որոշ դեպքերում, արտաքին ահազանգումը խրախուսվում է՝ առաջարկելով դրամական պարգև:

**Երրորդ կողմ** ծառայությունը ներառում է, օգտագործելով արտաքին գործակալությանը, տեղեկացնել հակաօրինական վարքագծի կազմակերպչական բուրգի գլխավերևում գտնվող անհատներին՝ առանց բացահայտելու ահազանգողի

[1] http://www.iso.org/iso/iso37001

ինքնությունը: Սա համեմատաբար նոր երևույթ է: «Միջազգային Ահազանգողները» մի կազմակերպության օրինակ է, որը ներգրավված է ահազանգողների համար երրորդ կողմի ծառայության մատուցման մեջ:

Ընկերությունների և իշխանությունների մի ստվար զանգված ընտրում է երրորդ կողմի ծառայությունները, որում ահազանգողը անանուն է նաև երրորդ կողմի ծառայություն մատուցողի համար: Սա հնարավոր է իրականացնել ասիմետրիկ կոդավորված վեբ լուծումների շնորհիվ՝ առանց հետևելու ահազանգողի IP հասցեներին և meta տվյալների պահպանման: Որպես նման ծառայություն մատուցողի օրինակ հանդես է գալիս WhistleB-ն:[2] Վերջինիս առավելություններն են՝

- Տվյալների անվտանգության բարձր մակարդակ,
- Օգտագործողների համար հարմարավետություն (User friendliness) – ահազանգման ալիքը հասանելի է 24/7 տեղական լեզվով: Անվտանգ, վեբ-ի վրա հիմնված ալիքը սարքից անկախ է և կարող է հասանելի լինել մի շարք սարքերի միջոցով, այդ թվում՝ սմարթֆոնների: Հեռախոսով ահազանգումը կարող է ինտեգրվել ծառայության մեջ:
- Efficient case management – գործերի արդյունավետ կառավարում – Փորձագետների գլոբալ ցանցը հասանելի է ըստ պահանջի, որն ունի շուկայի առաջատար խորհուրդների տրամադրման հարցում համապատասխան ունակություններ և փորձ հետաքննություններին աջակցելու հարցում, օրինակ կոռուպցիայի, խարդախության, դատաբժշկական հաշվապահության, տվյալների վերլուծության և այլ բնագավառներում:
- Իրավական համապատասխանություն - ԵՄ-ի երկրներում, մասնավորապես, կան ազգային ուղեցույցներ, թե ինչպես անհատական տվյալները կարող են մշակվել ահազանգողներին տրամադրվող ծառայությունների շրջանակներում: The WhistleB ծառայությունը հարմարեցված է այդ ուղեցույցներին:
- Գլոբալ մասշտաբով կապեր:[3]

## Corruption Watch

[2] https://en.wikipedia.org/wiki/Whistleblower
[3] https://whistleb.com/

Corruption Watch-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է Հարավային Աֆրիկայում, որը ստեղծվել է 2012 թ. հունվարին: Այն ապավինում է հանրությանը, որպեսզի հաղորդի կոռուպցիայի վերաբերյալ: Ահազանգողների հաղորդումները օգտագործում են որպես տեղեկատվության կարևոր աղբյուր կոռուպցիայի դեմ պայքարելու գործում:

Corruption Watch-ը ապահովում է հարթակ կոռուպցիայի վերաբերյալ ահազանգելու համար: Յուրաքանչյուրը կարող է ապահով կերպով կիսվել իր փորձի և դիտարկումների վերաբերյալ և արտահայտվել կոռուպցիայի դեմ: Հաղորդակցությունը ներառում է կայքը, SMS գիծը, սոցիալական մեդիան, էլեկտրոնային փոստը կամ փոստը:

Corruption Watch-ը ուսումնասիրում է ընտրված ահազանգումներ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ, մասնավորապես այն դեպքերը, որոնք կարող են առավելապես լուրջ ազդեցություն ունենալ հասարակության վրա, օրինակ այն դեպքերը, որոնք կապված են հիմնական առողջապահական կամ կրթական ծառայությունների հետ, որոնք ազդում են ազդում են առավել անապահով հարավ-աֆրիկացիների վրա: Եզրահանգումները հանձնվում են համապատասխան մարմիններին՝ հետագա ընթացք տալու համար: [4]

## Կառավարության հաշվետվողականության ծրագիր

Կառավարության հաշվետվողականության ծրագիրը (GAP) ստեղծվել է 1977թ.-ին Քաղաքական հետազոտությունների ինստիտուտում (IPS) ի պատասխան մի քանի ահազանգողների, ինչպիսիք են Դանիել Էլզբերգը, ովքեր եկել էին Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ Սպիտակ տան, FBI -ի և Պենտագոնի սկանդալների վերաբերյալ: Սկսած այդ ժամանակից, GAP-ը ծառայել է որպես ահազանգողների պաշտպանության և շահերի պաշտպանության առաջատար կազմակերպություն: 40 տարվա ընթացքում ներկայացրել են շուրջ 6000 ահազանգողների: Շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի տարեկան բյուջեն կազմում է շուրջ 3.1 միլիոն դոլլար: Շուրջ 10000 դոնորների թվին են պատկանում Բաց հասարակության հիմնադրամը և Ռոքֆելերների ընտանիքը:

[4] http://www.corruptionwatch.org.za/about-us/who-we-are/about-corruption-watch/

Հաճախորդները հասել են բազմաթիվ բարձր հանրային արդյունքների. ուշագրավ են

- պլուտոնիումի արտադրության ավարտը ԱՄՆ-ում մինչև Սառը պատերազմի ավարտը,
- կառուցման մեջ գտնվող երեք ատոմային էլեկտրակայանների չեղարկումը և մի քանի այլ միջուկային օբյեկտների շինարարության դադարեցումը,
- Համաշխարհային բանկի նախագահ Փոլ Վուլֆովիցի հրաժարականը,
- մի շարք վտանգավոր, բայց լայնորեն օգտագործվող դեղերի արտադրության և մարկետինգի դադարեցումը կամ կտրուկ կրճատումը, հատկապես Vioxx և Avandia.
- մի շարք բանկերի (Citibank, Deutsche Bank, Bank of America, Countrywide Financial) հիփոթեքային և արժեթղթերի խարդախությունների բացահայտումները,
- Սպիտակ տան ջանքերի բացահայտում՝ խմբագրել գիտության հաշվետվությունները և ամփոփել միլիարդավոր դոլարների արդյունքները, որպեսզի այնպես դարձնեն, որ թվա, որ կլիմայի փոփոխություն կամ չի կատարվում, կամ չի առաջացրել մարդկային գործունեության արդյունքում,
- ազգային անվտանգության մարմինների կողմից ապօրինի գաղտնալսման և հսկողության բացահայտում Ջորջ Բուշի և Օբամայի վարչակազմերի ժամանակ՝ ներկայացնելով այնպիսի ահազանգողների, ինչպիսիք են Էդվարդ Սնոուդենը և այլոք:[5]

## «Qui tam» փոխհատուցման հայեցակարգ

Ժողովրդավարական հասարակության կառուցմանը, կոռուպցիայի իսպառ վերացմանը նպաստելու, հասարակության տարբեր խավերին՝ կոռուպցիայի միասնական պայքարին շահագրգիռ մասնակից դարձնելու նպատակով ներպետական իրավական համակարգում անհրաժեշտ է նախատեսել «*qui tam*» հայեցակարգը:

[5] https://www.whistleblower.org

*«Qui tam»*-ը համարվում է հանրային իրավունքի հայեցակարգ, որի համաձայն անհատը, ով աջակցում է մեղադրանքի պաշտպանությանը, գործը հաղթելու դեպքում իրավունք ունի ստանալ բռնագանձված գումարի որոշակի մասը:

«*Qui tam»* հայեցակարգը ծագել է լատինական հետևյալ բառակապակցությունից՝ *qui tam pro domino rege quam pro se ipso in hac parte sequitur,* ինչը թարգմանաբար նշանակում է, որ անձը ներկայացնում է մեղադրանքը, ինչպես թագավորի, այնպես էլ իր համար:

Առաջին անգամ «*Qui tam»* հայեցակարգը տեղ է գտել դեռևս ռոմանական և անգլո-սաքսոնական օրենքներում: Հռոմեական քրեական հետապնդումները սովորաբար նախաձեռնվում էին անհատ քաղաքացիների կողմից (delatores), և հռոմեական քրեական օրենքները առաջարկում էին պատասխանողից բռնագրավված գույքի մի մասը հետապնդման նախաձեռնողին որպես փոխհատուցում: Անգլո-սաքսոնական Անգլիայում 656թ.-ին Քենթի Wihtred արքայի հրամանագրով Sabbath խանգարողը կտուգանվեր, իսկ այն մարդը, ով կտեղեկացներ այդ մասին, կստանար տուգանքի կեսը և աշխատանքից բխող շահույթը:[6]

Կանադայի ռեգիոններում, որտեղ կիրառվում է անգլիական հանրային իրավունք, *qui tam* հայցերը ունեցել են սահմանափակ շրջանակ, սակայն 1933թ.-ից սկսած Գանձապետարանի դատական ակտը[7] մեկնաբանվել էր այնպես, որ *qui tam*-ը թույլատրվում էր այն տույժերի և բռնագրավումների դատավարություններում, որոնցում դատավարությունները միայն Թագի անունից են:[8] Փաստաբանները օգտագործում էին *qui tam* հայցերը, որպեսզի կանխեին չհիմնավորված ներխուժումները իրենց սեփականություն ոչ որակավորված կիրառողների կողմից:[9]

Վերոնշյալ հայեցակարգի առավելությունը կայանում է նրանում, որ այն մի կողմից քաղաքացու միջոցով փորձում է վերականգնել արդարությունը և պետության միջոցները, մյուս կողմից՝ շահագրգռում հասարակության անդամներին ավելի զգոն լինել կոռուպցիայի բացահայտման և վերացման գործում:

---

[6] J. Randy Beck, The False Claims Act and the English Eradication of Qui Tam Legislation, 78 North Carolina Law Review 539 (March 2000).

[7] the Exchequer Court Act, R.S.C. 1927, c. 34

[8] Bank of Montreal v. Royal Bank of Canada, [1933] SCR 311; see sec 75(a) of RSC 1886 v2 c.135 "Supreme and Exchequer Courts").

9 (1871: Allen Qui Tam ընդդեմ Jarvis, 32 UCR 56):

Հայեցակարգը այլևս չի կիրառվում Մեծ Բրիտանիայում և Ուելսում 1951թ. Հանրային ազդարարների ակտի[10] ընդունումից հետո, սակայն այն շատ արդիական է ԱՄՆ-ում. կարգավորվում է Կեղծ բողոքների ակտով[11], որը հայտնի է որպես Լինկոլնյան օրենք: Այն թույլ է տալիս անհատներին, որոնք փոխկապակցված չեն կառավարության հետ, անցյալում կամ ներկայում տեղի ունեցած խարդախության, պետական գումարների ոչ նպատակային օգտագործման վերաբերյալ դաշնային կառավարության դեմ մեղադրանք ներկայացնել: Այս գործընթացը անվանվում է ազդարարում (whistleblowing): Հաջողության դեպքում ազդարարներին տրամադրվում է բյուջե վերադարձված ցանկացած գումարի 15-25%-ը:

Այս օրենքի համաձայն բողոքները ներկայացվել են կեղծ բողոքների վերաբերյալ ինսայդերական գիտելիքներ տիրապետող անձանց կողմից, որոնք սովորաբար վերաբերել են առողջապահության, ռազմական և այլ պետական ծախսերի ծրագրերին:

Դրույթը թույլատրում է անհատին, որը կոչվում է «relator», դատարան հայց ներկայացնել ԱՄՆ-ի անունից, երբ անհատը տեղեկատվություն ունի այն բանի մասին, որ Պատասխանողը գիտակցաբար ներկայացրել է կամ պատճառ է հանդիսացել ներկայացնել կեղծ կամ խարդախ բողոք ԱՄՆ-ի դեմ: «Relator»-ը կարող է ընդհանրապես անձնապես վնաս չկրել Պատասխանողի վարքագծից, սակայն վերջինս դատարանում իր բողոքը ներկայացնելու համար հանդիսանում է պատշաճ կողմ՝ իրեն տրված՝ ենթադրյալ իրավախախտմամբ կառավարությանը պատճառված վնասի «մասնակի հանձնարարության» միջոցով:[12] Տեղեկատվությունը չպետք է հանրայնացվի, մինչև «relator»-ը չորակվի որպես տեղեկատվության օրիգինալ աղբյուր:[13]

Բացի բռնագանձված գումարի 15-25%-ի վերադարձից, *«qui tam»* հայեցակարգը նախատեսում է փաստաբանական ծախսերի վերադարձ: Անձը, ով ինքն իրենով (*per se*), այսինքն՝ առանց փաստաբանի ներկայացուցչության, իրավունք չունի դատարան դիմել *qui tam* հայցերով:[14]

---

10 The Common Informers Act 1951 (14 & 15 Geo. 6, c. 39)

11 False Claims Act, 31 U.S.C. § 3729

12 See Nathan D. Sturycz, *The King and I?: An Examination of the Interest Qui Tam Relators Represent and the Implications for Future False Claims Act Litigation*, 28 St. Louis Pub. L. Rev. 459 (2009), *available at* http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1537749

13 *See, e.g. Rockwell International Corp. v. United States*, No. 05-1272, 549 U.S. 457 (2007) Text of *Rockwell International Corp. v. United State* is available from: Official U.S. Supreme Court slip opinion

14 United States ex Rel. Lu v. Ou, 368 F.3d 773 (7th Cir. 2004)

Այն պահից, երբ «relator»-ը պետության դեմ հայց է ներկայացնում, Արդարադատության վարչությունը, այն թաղամասի դատախազի (U.S. Attorney) հետ համատեղ, որտեղ հայցը ներկայացվել է, տարբերակ ունի միջամտել դատավարությունում: Եթե կառավարությունը միջամտում է, այն ծանուցում է այն ընկերությանը կամ անձին, ում դեմ ներկայացվել է հայցը, որ հայց է ներկայացվել իրենց դեմ: *Qui tam* հայցերը ներկայացվում են կնքված՝ filed under seal ընթացակարգով, ինչը ենթադրում է գաղտնիություն: Մասնակիորեն կարող է գաղտնիությունը չեղյալ հայտարարվել դատարանի կողմից, որպեսզի հնարավոր լինի գործի քննություն իրականացնել:

Կնիքը արգելում է պատասխանողին բացահայտել նույնիսկ գործի գոյության մասին՝ ներառյալ ընկերության բաժնետերերին: Այս փաստը առաջացնում է հակասություններ պատասխանողի այլ՝ Արժեթղթերի և բորսայի հանձնաժողովում կամ ֆոնդային բորսայի կանոններով ստանձնած պարտավորությունների հետ, որոնք պահանջում են բացահայտել իրենց դեմ հարուցված գործերը, որոնք կարող են ֆիզիկապես ազդել բորսայի գնի վրա: Կառավարությունը հաջորդաբար, առանց բացահայտելու հայցվորի ինքնությունը կամ այլ փաստեր, սկսում է պատասխանողից բացահայտումներ իրականացնել:

Այս հայեցակարգի շնորհիվ մինչ օրս ԱՄՆ-ում վերականգնվել է 27 միլիարդ դոլար հարկատուներից:

«*Qui tam»* դրույթներ առկա են նաև մի շարք այլ ԱՄՆ օրենսդրական ակտերում, որոնք վերաբերում են բարեկամ ազգերի դեմ նավերը զինելուն,[15] Հնդկական պաշտպանության օրենքները ոտնահարելուն[16], Ֆլորիդայի ափից ստորջրյա գանձերը ի օգուտ օտարերկրյա ազգերին հեռացնելուն[17] և կեղծ նշագծմանը:[18] 2011թ. փետրվարին, կեղծ նշագծմանը վերաբերող «*qui tam»* դրույթը հակասահմանադրական ճանաչվեց:

Օրինակ Բրեդլի Բիրկնֆելդը, որպես ազդարար, բացահայտել է, որ UBS բանկում հարկերից խուսափում է կատարվել ամերիկացիների կողմից մինչև 20 միլիարդ դոլարի չափով: Դատախազական համաձայնագրով բանկը տուգանվել է 780 միլիոն դոլարի չափով, և ազդարարը ԱՄՆ Տեղեկատվություն հանձնող անձանց գրասենյակի կողմից

---

[15] 18 U.S.C. § 962
[16] 25 U.S.C. § 201
[17] 46a U.S.C. 723
[18] 35 U.S.C. § 292

ստացել է 104 միլիոն դոլար պարգևավճար որպես կորպորատիվ տեղեկատվություն հանձնող անձ:

Հարավային Կորեայում «Կոռուպցիայի դեմ պայքարի» մասին օրենքի համաձայն անձը կպարգևատրվի 2-10% համապատասխան այն գումարի, որը բացահայտվել է իր տված հաղորդման շնորհիվ, սակայն այդ գումարը չի կարող գերազանցել 200 հազար դոլարը:

## Անանունության ապահովման ինֆորմացիոն տեխնոլոգիաների լուծումներ DarkNet և Tor համակարգեր

Դարքնեթը մասնավոր, ծածկված ցանց է, որից կարելի է միայն օգտվել հատուկ ծրագրային ապահովման, կոնֆիգուրացիաների և թույլտվությունների միջոցով, հաճախ օգտագործելով ոչ ստանդարտ հաղորդակցման տարրեր: Այս ցանցերում կապերը հաստատվում են միայն, երբ IP հասցեները հանրորեն հասանելի չեն, ուստի օգտատերերը կարող են ինֆորմացիայի փոխանակում կատարել առանց կողմնակի միջամտության:

Դարքնեթի 2 հիմնական տեսակներն են

- վստահված peer-ների (ընկերների) միջև ցանցերը, որոնք հիմնականում օգտագործվում են ֆայլերի փոխանակման համար,
- privacy networks (գաղտնիության ցանց), ինչպիսին Tor-ն է (The Onion Router):

Կիրառվում է հետևյալ դեպքերում՝

- անձնական կյանքի անձեռնմխելիություն
- քաղաքական հաշվեհարդարներից վախ,
- ահազանգողների պաշտպանություն,
- ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում հանցագործություններ,
- հեղինակային իրավունքով պաշտպանված տվյալների տարածում:

Հայտնի DarkNet-ների թվին են պատկանում՝ RetroShare, Freenet, GNUnet:[19]

[19] https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%B0%D1%80%D0%BA%D0%BD%D0%B5%D1%82

Tor-ը սերվեր է, որը օգտատերերին համացանցում անանուն է պահում՝ գաղտնի պահելով օգտատիրոջ գտնվելու վայրը: Այն աշխատում է՝ տեղափոխելով տեղեկատվությունը բազմաթիվ Tor-ը սերվերների միջոցով: Սերվերներից յուրաքանչյուրի դերը տեղեկատվությունը լոկ մի սերվերից դեպի մյուսը շարժելն է՝ մինչև վերջնական կայք: Արդյունքում, նման ճանապարհով փոխանցված տեղեկատվությանը դժվար է հետևել:[20] Լրագրողները օգտվում են այս ծրագրից առավել ապահով ահազանգողների հետ կապվելու համար:[21]

[20] https://simple.wikipedia.org/wiki/Tor_(software)
[21] https://www.torproject.org/about/overview.html.en

## II. ՀՀ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՀՀ կառավարությունը ղեկավարվելով միջազգային փորձով՝ վերջին 12 տարիներ ընթացքում ընդունելով հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրերը, մշտապես ներառում է այս ինստիտուտի ներդրման համապատասխան միջոցառումների իրականացման ցանկը, սակայն մինչ օրս որևէ հստակ քայլեր չեն ձեռնարկվել այդպիսի պաշտպանության մեխանիզմները օրենսդրական մակարդակով ամրագրելու համար:

ՀՀ կառավարությունը 2015-18թ.թ. հակակոռուպցիոն ռազմավարություն միջոցառումների ծրագրի 53–րդ կետում ներառել է Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնող անձանց իրավական պաշտպանության երաշխիքների օրենքով սահմանումը:

Ուսումնասիրելով 2009-2012թթ կատարված աշխատանքները տեսնում ենք, որ ՀՀ Կառավարությունը նախկինում այս ոլորտի վերաբերյալ աշխատանքները թերի են կատարվել, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվել է փոփոխություններ՝ պաշտպանություն տրամադրելով ավելի լայն շրջանակի անձանց, այսինքն՝ բացի վկայից, փորձագետից և տուժողից ներառվել են նաև դատավարությանը մասնակցող **մյուս անձինք**, այսինքն՝ ուղղակիորեն որևէ նշում չկա տեղեկատվություն տրամադրող անձանց պաշտպանության վերաբերյալ:

Այստեղ ուշադրություն պետք է դարձնել այն փաստին, որ վավերացված կոնվենցիաներում ակնհայտորեն տեսնում ենք տեղեկություն տրամադրող անձանց տարանջատումը այլ անձանց շրջանակից: Կարծում եմ օրենսդրության մեջ այդպիսի նորմի ամրագրումը կարևոր խթան կհանդիսանա կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և վախի մթնոլորտի վերացման, ինչպես նաև ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկություն հաղորդելուց խուսափելու իրավիճակների կրճատմանը: Օրինակ, շատ հաճախ անձիք՝ զանգահարելով ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների կողմից գործարկվող հակակոռուպցիոն կենտրոններ և հաղորդելով կոռուպցիոն գործողությունների մասին, վերջում չեն համարձակվում տրամադրել իրենց տվյալները, որն անհրաժեշտ է իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելու և գործին ընթացք տալու համար: Սա իհարկե պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝ իրավապահ մարմինների և հանրության համագործակցության ցածր մակարդակով, հանրային ծառայողների

նկատմամբ բնակչության ցածր վստահության մակարդակով: **Ուստի անհրաժեշտ է խնդիրը լուծել առանձին ընդունված օրենքի մակարդակով:**

## III. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ՎՐԱ

Ստեղծել օրենք «Տեղեկատվություն հանձնող անձանց պաշտպանության» մասին, որի գործողությունը տարածել և մասնավոր և հանրային ոլորտի վրա՝ ներառյալ ազգային անվտանգության և հետախուզական տեղեկատվության հավաքագրման գործակալության համար աշխատող անձանց վրա, ինչպես նաև ՀՀ-ում ապաստան հայցող Եվրոպայի խորհրդի մասնակից պետությունների այն անձանց վրա, որոնք հետապնդվում են իրենց հայրենիքներում:

- Սահմանել տեղեկատվություն հանձնող անձին որպես՝ *կոռուպցիոն և այլ ապօրինի գործողությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձ:*
- Կոռուպցիայի հետ կապված իրավախախտման փաստի մասին տեղեկատվություն հայտնած, կամ կոռուպցիայի հայտնաբերմանը այլ կերպ նպաստող **ֆիզիկական անձը կամ նրա ամուսինը, մոտիկ ազգականները** պետք է **գտնվեն պետության պաշտպանության ներքո,** եթե առկա են բավարար տվյալներ նրանց նկատմամբ **բռնության կիրառման, սպանության, սեփականության վնասման կամ ոչնչացման կամ նրանց նկատմամբ այլ հակաիրավական գործողությունների իրականացման վերաբերյալ:** Համապատասխան օրենքի ընդունում: Այս հարցով առաջադեմ են համարվում այն երկրները, որտեղ առկա օրենքները ներառում են ահազանգողների պաշտպանության համապարփակ կամ գրեթե համապարփակ դրույթներ և ընթացակարգեր հանրային և/ կամ մասնավոր ոլորտներում: Եվրոմիության երկրներից նման երկրների թվին են պատկանում Լյուքսեմբուրգը, Մեծ Բրիտանիան, Ռումինիան և Սլովենիան:
- Ներդնել պաշտպանության մեխանիզմներ վերջիններիս համար, ինչպիսիք են՝
    - Տեղեկատվություն հայտնող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանություն. Օր՝ Հարավային Կորեայում սահմանված է, որ տվյալները չեն կարող հրապարակվել առանց վերջինիս համաձայնության:

- Անանուն հաղորդումների ներկայացման հնարավորություն վերոնշյալ առաջատար մոտեցումների և համակարգերի հիման վրա, Օր՝ ԱՄՆ, Արգենտինա, Գերմանիա, Ավստրալիա, Չինաստան…,
- Տեղեկատվություն հայտնող անձի անձնական անվտանգության ապահովում, բնակարանի և այլ գույքը պահպանվում,
- համապատասխան մարմին հաղորդում տրամադրելու նպատակով ներկայանալու անվտանգության ապահովում,
- բնակության այլ վայր փոխադրելը.
- ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը.
- աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը.
- վրեժխնդրությունից պաշտպանելու համար քրեական պատժամիջոցներ սահմանելը . Օր՝ ԱՄՆ
- ապաստան տրամադրելը ՀՀ-ում ապաստան հայցող Եվրոպայի խորհրդի մասնակից պետությունների այն անձանց, որոնք հետապնդվում են իրենց հայրենիքներում:

- Սահմանել խրախուսման միջոցներ՝ վերոնշյալ Հարավայի Կորեայի և ԱՄՆ-ի փորձի հիման վրա:
  - Պարգևատրման համակարգի ստեղծում:
  - Հաղորդում ներկայացնող անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքների ստեղծում. Օր.՝ Կանադայում և ԱՄՆ-ում գործատուները կենթարկվեն քրեական պատասխանատվության, եթե խախտել են հաղորդում ներկայացրած անձանց իրավունքները: Խախտումը կարող է արտահայտվել ինչպես աշխատանքից հեռացնելով, պաշտոնի իջեցումով, այլ աշխատավայր տեղափոխելով, այնպես էլ ակնհայտ վատ աշխատանքային միջավայրի ստեղծումով, որը անմիջականորեն կապված է անձի հաղորդումներ ներկայացնելու հետ: Այս իրավիճակում ապացուցման բեռը դրված է գործատուի վրա, ով պետք է ապացուցի իր գործողությունների ու աշխատողի հաղորդում ներկայացնելու գործողության պատճառահետևանքային կապի բացակայությունը:

- Որպես հակակշռող մեխանիզմ պատիժներ սահմանել կեղծ տեղեկատվության համար: Կախված ոլորտից և ինֆորմացիայի կարևորությունից կեղծ տեղեկություններ ներկայացնելու դեպքում անձինք կենթարկվեն քրեական պատասխանատվության՝ ազատազրկման կամ տուգանքի: Օր.՝ Հարավային Կորեայում կեղծ տեղեկություններ ներկայացնելու դեպքում անձը կենթարկվի պատժի զրպարտության համար առավելագույնը 10 տարի ազատազրկմամբ:
- Ստեղծել հատուկ վերահսկող մարմին, որը կստուգի տեղեկատվության հավաստիությունը:
- Ստեղծել հատուկ կայքէջ, որը համալրված պետք է լինի բնագավառը կարգավորող օրենսդրությամբ, այն պետք է ունենա առցանց հաղորդումների ներկայացման վայր, որը հնարավորություն կտա հետևել գործի ընթացքին: Կայքէջի միջոցով պետք է նաև հանրայնացնել բացահայտված հանցագործությունները:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այսուհետ՝ ՔԴՕ, «Ֆիզիկական անձանց հաղորդումները» վերտառությամբ 177-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ *Չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդումը քրեական գործ հարուցելու առիթ չէ:* Առաջարկում ենք 177-րդ հոդվածի 7-րդ մասը վերախմբագրել «այլ անանուն հաղուրդումներ» եզրաբանությունը հանելով՝ վերջում դնել ստորակետ, ու գրել բացառությամբ հաղորդում ներկայացնող անձանց պաշտպանության մասին առանձին օրենքով նախատեսված դեպքերի, որում նաև պետք է ներառվի ՔԴՕ 12-րդ գլուխը, ի դեպ տեսությունում էլ նշվումա, որ դա վարչաիրավական բնույթի է և տեղ չունի քր դատ օրենքում,
- «ՀՀ ՔՕ 333-րդ սուտ մատնության հանցակազմը առհասարակ խոչընդոտ չի կարող համարվել, քանի որ այդ հանցակազմի համար պարտադիր հատկանիշ է սուբյեկտը, ով անկհայտ սուտ տեղեկություններ է տրամադրել, բայց այն դեպքում, երբ այդ սուբյեկտը գաղտնի է, հանցակազմը բացակայում է: Միևնույն ժամանակ, հոդվածի վերջում կարծում եմ պետք է ավելացվի նոր մաս, որտեղ որպես խրախուսական բնույթի նորմ կգրվի, որ հաղորդում ներկայացնող անձանց պաշտպանության մասին առանձին օրենքով

նախատեսված դեպքերում անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, մնացածն արդեն կկարգավորվի օրենքով: